

համարհէ, 1. Հոս չենք ուզեր կրկնել ան ծուռ ենթադրութենէ առաջ եկած փաստները, թէ Մստուծոյ հաճոյ ըլլալու համար՝ բաւական է քանի մը բարի գործքեր ընել, և թէ հարկ չկայ մեր կրքերը սանձել և առաքինութեան ետեւէ ըլլալ: Մտնք այնպիսի փաստակար թոյներ են որ ծնողք ամէն ջանք պիտի ընեն իրենց տղոցմէն հեռու բռնելու:



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Թարթուֆ:

ԵՐԿՐԻՍ բերքերուն մէջ Թարթուֆ՝ ըսուածն ալ հին ատենէն՝ ի վեր շատ յարգի բան եղած է, մանաւանդ Յունաց ու Հռոմայեցւոց մէջ. իսկ հիմա ասոր գործածութիւնը գրեթէ Եւրոպայի ամէն կողմը տարածուած է: Երևելի բանաստեղծներ ալ շատ երգեր ու գովեստներ շինեցին Թարթուֆին վրայ. բայց մենք հոս տեղս կ'ուզենք իրեն յատկութեանցը վրայ միայն խօսիլ, թէպէտ և ինչուան հիմա դեռ աղէկ մը ճանչցուած չեն բոլոր յատկութիւնները:

Բնապատումները միաբան կը հաստատեն թէ Թարթուֆը սունկի տեսակ մըն է. միայն արմատ ունի՝ որով հողուն հետ կպած կը մնայ. իսկ տերև ու ճիւղ ամենեւին չունի, անոր համար դրսէն ալ ամենեւին չիմացուիր ուր տեղ գտնուիլը: Եւ թէ որ անասուններէն ոմանք ասոր հոտէն չըճանչնային, մարդիկ չէին կրնար գըտնել:

Այրի խոզերը Թարթուֆը շատ կը սիրեն, անոր համար Եւրոպացիք Թարթուֆը անոնց հանել կուտան. բայց շատ անգամ խոզերը հանածնին իրենք ուտելուն համար, անոնց տեղը տեսակ մը շներ կը գործածեն, որ

գետինը փորելով՝ Թարթուֆ եղած տեղը կը յայտնեն. մարդիկ ալ նոյն տեղը փորելով դուրս կը հանեն:

Թարթուֆը կը գտնուի աւելի կազնիի ու շագանակի անտառներու մէջ. բայց ան ծառերը ամենեւին օգուտ մը չունին Թարթուֆին աճմանը. միայն թէ նոյն դիրքը երկուքին ալ աղէկ կը յարմարի. և աւելի կաւոտ աւազախառն, թեթև ու խոնաւ երկիրներ կը սիրեն, և սովորաբար 5, 6 ոտք խորունկը կը գտնուին: Թարթուֆ բուսած երկիրներն ընդհանրապէս խորտուբորտ և ճեղքըւտած են. ու դատարկ տեղոյ մը զարնելով ինչ ձայն որ կ'ելլէ, այսպիսի տեղուանք ալ ամենեւին նոյն ձայնը կը հանեն. թէպէտ աս նշաններս ալ բոլորովին ստոյգ չեն:

Թարթուֆը գրեթէ ամէն տեղ կը գտնուի, բայց աւելի բարեխառն երկիրներու մէջ. Փիէմոնթի ու Կազղիոյ մէջ գտնուածները առատ են, և հոտերնին ու մտերնին ալ շատ համեղ է:

Թարթուֆին ձևը ընդհանրապէս կլոր կ'ըլլայ, գոյնը սև կամ մոխրագոյն, վրան կուստ կուստ. միջուկը կարծր է ու սև կակերակներով թերթ թերթ բաժնուած է. և թէ որ մէջտեղէն ճղքելու ըլլաս՝ աս երակները որոշ կ'երևան:

Շատ վէճեր եղան թէ արդեօք Թարթուֆը ինչէն առաջ կուգայ, և ինչուան հիմա դեռ չէ իմացուած. աւելի հաւանական է որ ինքը հասունցած ատենը կտոր կտոր կը բաժնուի, ու անոնցմէ նոր արմատներ կ'ելլեն: Ոմանք փորձի համար պարտէզներու մէջ Թարթուֆի կտորուանք ցաններ են, և կ'ըսեն թէ փորձերնին յաջողեր է: Ինչ որ աս բանս ստոյգ է (ինչպէս որ ալ կ'երևնայ) կրնայ մարդ Թարթուֆը շատցընել. բայց յայտնի է թէ ան ատեն իր յարգն ալ կը կորսուի. վասն զի ասիկայ միայն քիչ գտնուելուն համար այնչափ ախորժելի եղած է. և զարմանալի օգուտ մը

1 Տօմոզ էմառ: Գլ. Truffe.

չունենալէն 'ի զատ, թէ որ շատ ուտուի՝ փնասակար ալ կրնայ ըլլալ:



ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Վնասեղ շինելու ներպը:

Արեւիքի գիտեն թէ գնտասեղը՝ ինչ հարկաւոր բան է. որ թէպէտ շատ աժան կը ծախուի, դրսէն ալ պարզ արհեստով շինած կ'երևնայ, բայց ասիկայ շինելու համար մեծ վարպետութիւն պէտք է, և շատ բարակ գործիքներ: Այս պատճառաւ երկայնատեն ջանացին անանկ գործիքներ գտնելու որ քիչ ժամանակի մէջ շատ բան շինեն, որպէս զի աժան ալ ծախեն:

Վնտասեղին գիւտը վեշտասաներորդ դարուն գտնուեցաւ Վերմանիայի Վուրեմպերկ քաղաքին մէջ: Այստեղ հիները ասոր տեղը բոյսերու ու ձկան փշեր ու արծրութի ոսկիի շինած սրածայր թելեր կը գործածէին:

Այդ գնտասեղին թելերը ոչ շատ կակուղ պիտի ըլլան, ոչ ալ կարծր. և լաթի վրայ խոթուելով ալ վրանին ժանգ պիտի չկապէ: Վնտասեղի թել շինելու համար ամենէն յարմար նիւթը արոյր կամ գեղին պղինձն է: Այնպէս շինած պիտի ըլլայ որ մետաքսեղէններու մէջ ալ դիւրաւ մտնէ ու չպատռէ. ծայրն ալ սուր պիտի ըլլայ, թե՛ն ալ սաստիկ ողորկ. որպէս զի բոլորը լաթին մէջ չխորի՝ ծայրը մէկ կ'որ մը շինելու է գնտակի ձեով, որպէս զի խոթելու ատեն ալ մարդուն ձեռքը չծակէ ու չցաւցընէ: Այն կ'իմացուի թէ գործաւորը աղէկ գործիքներ պիտի ունենայ թելերը կտրելու համար, ու մէկ ծայրը սուր ու

մէկալ ծայրը գնտիկ շինելու համար:

Այս որովհետեւ գնտասեղ շինելու թելը սովորաբար սև կ'ելլէ թելադործին գործարանէն, ուստի պէտք է որ նախ անիկայ մաքրես աս կերպով: Հասարակ ջրի մէջ դիր քիչ մը գինիի տորտ՝, թե՛ն ալ անոր մէջը դիր եփէ, ետքը սալի՝ վրայ մըձով ծեծէ որ դիւրաւ չժանգոտի. յետոյ մաքուր ջրով լուա ու արևու մէջ չորցուր: (1) Ե որ աս թելը ուղածիդ չափ բարակ չէ, նորէն թելահանէ՝ քաշէ. ետքը մէկ ծայրը կապէ սեղանատախտակիդ՝ մէկ ձոթը, մէկալ ծայրն ալ աքցանով բռնէ քաշէ շիփշիտակ ինչուան տախտակին մէկալ ծայրը:

Այսնկ քովէ քով ձիգ կապէ 500 կամ 600 թել նոյն տախտակին վրայ, ետքը սկսէ կտրել ամէնքը մէկէն ուղած երկայնութեամբ:

Արպէս զի աս կտրած թելերդ հաւասար երկայնութի ունենան՝ պէտք է ան տախտակին վրայ ուր որ աս թելերը պրկեր ես՝ հաստատուն քանոն՝ մը ունենաս՝ հաւասար կտորներ բաժնած, և ամէն անգամ նայէ որ ան քանոնին գծած տեղուանքէն կտրես թելերը: (2) Եւ թելը ուղած գընտասեղիդ կրկին մեծութեամբ պիտի կտրես որ երկու ծայրը սուրցընէլէն ետքը՝ մէջտեղէն կտրելով երկու գնտասեղ շինուի:

Ասկ ծայրերը սուրցընելու համար պողպատէ շինած անիւ մը կայ, որուն շրջապատը խարտոցի պէս է, և չուանով մը արագ արագ կը պտըտի: Այս անիւը պտըտելու ատեն՝ գործաւորը ան կտրած թելերը անոր կը կռթընցընէ ու երկու ծայրերը կը սըրէ դիւրին կերպով, անանկ որ մէկ օրուան մէջ 24,000 անգամ վերի ըսած քանոնիս դիմացի կտրած թելերը կը լմնցը-

1 Թօփու:
2 Արոյր կամ գեղին պղինձ (դիւրիճ) շինելու համար ան A 1/2 լիտր պղինձ (պոփը) հալեցու, ու 1 1/2 լիտր զինկ (Բիւլետա ճափէի) խառնէ անոր հետ:

1 Գինիի տակառներուն տակը նստած տորոջ չորնալէն ետքը այրես կամ աղէկ մը լուսանէ՝ մէջէն կրի (սիւրէճ) նման նիւթ մը կ'ելլէ. ասոր զուտը գեղի մէջ ալ կը գործածուի, որ գլուխ Բարեւոյ կ'ըսուի տաճկերէն:

2 Իօր:
3 Հեփէ:
4 Թելէտ:
5 Ճեփէ: